



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՍՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

N _____

_____ 2012 թ.

Ա/Ձ Ժորա Մարտիրոսյանին
հասցե՝ ք.Երևան, Կուզնեցովի 9
պատճենը՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ պետ
պարոն Ա.Հարությունյանին

Կից ուղարկվում է Ձեր գանգատի վերաբերյալ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 03.02.2012թ. թիվ 5/1 որոշումը:

Առդիր՝ 4 թերթ:

Հարկային մարմնի գանգատարկման
հանձնաժողովի նախագահ՝

Տ.ԲԱՐՍԵՂՅԱՆ

« Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 5/1

3 փետրվարի 2012թ.

Քննարկման ընթացքում նշվեց, որ « ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 10.01.2012թ-ի նիստում քննության է առնվել Ա/Ձ ժորա Մարտիրոսյանի գանգատը « ԿԱ ՊԵԿ Մյասնիկյանի «Տ 25.10.2011թ. թիվ 2106022 ստուգման ակտի դեմ: Արդյունքում ընդունվել է որոշման նախագիծ, որի համաձայն վերոգրյալ ստուգման ակտը թողնվել է անփոփոխ:

Նշվեց նաև, որ համաձայն « ԿԱ ՊԵԿ նախագահի ժ/պ 20.01.2012թ. թիվ 2 որոշման սույն գանգատի քննարկման և դրա վերաբերյալ որոշում ընդունելու « օրենսդրությամբ սահմանված ժամկետը երկարաձգվել է 15 օրով:

Համաձայն « ԿԱ ՊԵԿ Մյասնիկյանի «Տ պետի 10.10.2011թ. թիվ 2206036 հանձնարարագրի « օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում Ա/Ձ ժորա Մարտիրոսյանի մոտ կատարվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանման ուսումնասիրություն (հսկիչ գնում): Արդյունքում 13.10.2011թ-ին կազմվել է թիվ 2206036 արձանագրությունը (այսուհետ նաև արձանագրություն), որում մասնավորապես նշվել է, որ հարկային տեսուչ Արգինե Հայրապետյանի կողմից 13.10.2011թ. ժամը 15:57-ին ք.Երևան, Արվյան-Իսահակյան գետնանցում հասցեում գտնվող խանութից կատարվեց հսկիչ գնում 16000 դրամի չափով՝ մեկ զույգ ականջող 16000 դրամ արժեքով, որի դիմաց վճարումը կատարվեց կանխիկ դրամով: Ա/Ձ ժորա Մարտիրոսյանը գումարը չմուծագրեց ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չտրամադրեց: Ուսումնասիրությունն անցկացնող հարկային ծառայողների կողմից ներկայացվեցին ծառայողական վկայականները և ուսումնասիրության հանձնարարագիրը՝ ծանոթացման: Այնուհետ ժամը 16:02-ին ՀԴՄ-ից դուրս բերվեց «Z» հաշվետվություն՝ 8000 դրամ ընդհանուր գումարով, որի մեջ ներառված չէր կատարված վճարման արժեքը: «Z» հաշվետվությունը դուրս բերելուց հետո կատարված վճարման արժեքը՝ 16000 դրամը, ժամը 16:06-ին մուծագրվեց ՀԴՄ, դուրս բերվեց կտրոն և ժամը 16:07-ին դուրս բերվեց «Z» հաշվետվությունը՝ 16000 դրամ ընդհանուր գումարով: Գնված ապրանքը ուսումնասիրությունն անցկացնող հարկային ծառայողների կողմից ետ վերադարձվեցին տնտեսվարողին, սակայն վերջինս հրաժարվեց ետ ընդունել ապրանքը և վերադարձնել հսկիչ գնման գումարը:

Ուսումնասիրությամբ պարզվեց, որ տնտեսվարող սուբյեկտի կողմից խախտվել են « Կառավարության 26.08.2004թ. թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 19-րդ կետի «բ» ենթակետի պահանջները, որն առաջացնում է պատասխանատվություն «հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» « օրենքով սահմանված կարգով:

Ուսումնասիրության արդյունքում արձանագրված տվյալները հիմք են հանդիսացել « ԿԱ ՊԵԿ Մյասնիկյանի «Տ պետի կողմից 17.10.2011թ. թիվ 2106022 հանձնարարագրի հրապարակման և վերջինիս հիման իրականացված ստուգման արդյունքներով 25.10.2011թ. կազմված թիվ 2106022 ստուգման ակտով « օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվության միջոցը կիրառելու համար: Մասնավորապես, համաձայն « ԿԱ ՊԵԿ Մյասնիկյանի «Տ 17.10.2011թ. թիվ 2106022 հանձնարարագրի « օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում Ա/Ձ ժորա Մարտիրոսյանի մոտ կատարվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում, որն ընդգրկել է 28.08.2007թ-ից մինչև ստուգման ավարտն ընկած ժամանակաշրջանը: Արդյունքում 25.10.2011թ-ին կազմվել է թիվ 2106022 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել 150 000 դրամ:

Ստուգման ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ հիմք ընդունելով տնտեսվարող սուբյեկտի մոտ « ԿԱ ՊԵԿ Մյասնիկյանի «Տ պետի 10.10.2011թ. թիվ 2206036 հանձնարարագրով կատարված հսկիչ գնման ուսումնասիրության արդյունքում կազմված թիվ 2206036 արձանագրությունը, որով արձանագրվել է տնտեսվարող սուբյեկտի կողմից « կառավարության 26.08.2004թ. թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված կանոնների 19-րդ կետի պահանջների խախտման փաստը, և ղեկավարվելով ««-ում ստուգումների կազմակերպման ու անցկացման մասին» « օրենքի ու «հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» « օրենքի 10-րդ հոդվածի դրույթներով՝ տնտեսվարող սուբյեկտին «հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» « օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված կարգով առաջադրվում է տուգանք 150 000 դրամի չափով:

Ա/Ձ Ժորա Մարտիրոսյանի գանգատում մասնավորապես նշված է.

13.10.2011թ. 16:00-ի սահմաններում Աբովյան-Իսահակյան գետնանցումում գտնվող Ա/Ձ Ժորա Մարտիրոսյանի խանութ մուտք են գործել 2 տղամարդ և առանց ներկայանալու ու համապատասխան փաստաթուղթ ներկայացնելու վերցրել են հսկիչ-դրամարկղային մեքենան և նրա միջից հանել <Z> հաշվետվությունը: Հաշվետվությունում նշված է եղել 8000 դրամ, որը կազմել է խանութի տվյալ օրվա առևտրի գումարը: Հաշվետվությունը հանելուց հետո ներկայացել են << ԿԱ ՊԵԿ Մյասնիկյանի հարկային տեսչության աշխատակիցներ:

Առանց համապատասխան հանձնարարագիր ներկայացնելու հայտարարել են, որ իրականացրել են հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանման ուսումնասիրություն (հսկիչ գնում) և ներկայացրել են մեկ զույգ ականջօղ, որն իբր թե 16000 դրամով գնել են տվյալ խանութից և դրա դիմաց ՀՌՄ կտրոն չեն ստացել:

Հարկ է նշել, որ խանութում այդպիսի ականջօղեր երբեք չեն եղել և տվյալ անձի կողմից ներկայացված ականջօղերը չեն համապատասխանում խանութում վաճառվող ապրանքների փաթեթավորմանը և կոմպլեկտացիային: Ականջօղների վրա բացակայել է գնապիտակը, որից հետևում է, որ ականջօղերը նոր չէին:

Ա/Ձ Ժորա Մարտիրոսյանը հայտարարում է, որ ականջօղերն իր խանութին չեն պատկանում և գնված չեն տվյալ խանութից: Հաշվետվությունը հանելուց հետո նշված անձինք հեռացել են:

<< ԿԱ ՊԵԿ Մյասնիկյանի <S համապատասխան գրություններով Ա/Ձ Ժորա Մարտիրոսյանին ուղարկվել են հսկիչ գնումներ կատարելու վերաբերյալ թիվ 2206036 հանձնարարագիրը, հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ թիվ 2206036 արձանագրությունը, ինչպես նաև արձանագրություններ այն մասին, որ Ժորա Մարտիրոսյանը հրաժարվել է հանձնարարագիրը ստանալուց և արձանագրությունը ստորագրելուց: Ուղարկվել են նաև ստուգման թիվ 2106022 հանձնարարագիրը, արձանագրություն այն մասին, որ Ժորա Մարտիրոսյանը հրաժարվել է հանձնարարագիրը ստանալուց, ինչպես նաև 18.10.2011թ. թիվ 2106022 ակտի նախագիծը, որով Ա/Ձ Ժորա Մարտիրոսյանին առաջադրվել է տուգանք՝ 150 000 դրամի չափով:

Ա/Ձ Ժորա Մարտիրոսյանը հայտարարում է, որ վերը թվարկված փաստաթղթերից և ոչ մեկը իրեն չի ներկայացվել, որի արդյունքում խախտվել են <Ստուգումների կազմակերպման և անցկացման մասին> << օրենքի 2-րդ հավելվածի 1.5 և 1.6 կետերի պահանջները:

Մյասնիկյան <S թիվ 2206036 արձանագրության մեջ նշվում է, որ հսկիչ գնումը իրականացրել է հարկային տեսուչ Արզիսե Հայրապետյանը, սակայն Ա/Ձ Ժորա Մարտիրոսյանը հայտարարում է, որ հարկային տեսուչ Արզիսե Հայրապետյանը ստուգում իրականացնողների թվում չի եղել: Խանութ են այցելել 2 տղամարդ և որևէ կին նրանց հետ չի եղել:

Թիվ 2206036 արձանագրության մեջ նշված չէ արձանագրության կազմման վայրը, որը հանդիսանում է <<հսկիչ գնումների անցկացման կարգի> 1.6. կետի պահանջների խախտում:

Վերը շարադրվածից հետևում է, որ Մյասնիկյան <S-ի աշխատակիցների կողմից որևէ փաստաթուղթ չի ներկայացվել և խանութում որևէ արձանագրություն չի կազմվել: Մյասնիկյան <S-ի աշխատակիցների կողմից ներկայացված փաստաթղթերում նկարագրված դեպքերն իրականությանը չեն համապատասխանում:

Ոնդգծելով այն հանգամանքը, որ հսկիչ գնում իրականում տեղի չի ունեցել անդրադառնանք դրա իրավական կողմին:

Հանձնաժողովի ուշադրությունը հրավիրենք այն հանգամանքին, որ Մյասնիկյանի <S կողմից ներկայացված թիվ 2206036 հանձնարարագրում բացակայում է <<հսկիչ գնումների անցկացման կարգի> 1.3 կետով նախատեսված հսկիչ գնում իրականացնելու համար հիմքերից որևէ մեկը, որը հիմք ընդունելով հարկային մարմինները կարող էին իրականացնել հսկիչ գնում: Այսինքն, Մյասնիկյան <S աշխատակիցներն ի սկզբանե իրավունք չեն ունեցել հսկիչ գնում կատարելու: Թիվ 2206036 հանձնարարագիրը չի բխում օրենքից և հակասում է օրենքի պահանջներին:

<Ստուգումների կազմակերպման և անցկացման մասին> << օրենքի 2-րդ հոդվածի, <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> << օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետի և <<Հարկերի մասին> << օրենքի 18-րդ հոդվածի դրույթներից բխում է, որ եթե նույնիսկ հսկիչ գնումներ իրականացնելիս խախտումներ արձանագրվեին, դրանք չէին կարող հիմք հանդիսանալ հարկային պարտավորություններ սահմանելու համար, քանի որ հսկիչ գնումն ի սկզբանե անօրինական է եղել:

Հարկ է նշել, որ ավագ հարկային տեսուչ Կարեն Հայրապետյանը չի ստորագրել Մյասնիկյան <S-ի կողմից ներկայացված 13.10.2011թ. և 18.10.2011թ. տնտեսվարող սուբյեկտի ղեկավարի կողմից ստուգման հանձնարարագիրը ստանալուց հրաժարվելու մասին արձանագրությունները, թիվ 2206036 արձանագրությունը, թիվ 2106022 ԱԿՏ-ի նախագիծը և թիվ 2106022 ԱԿՏ-ը: Արդյունքում խախտվել է

<Հսկիչ գնումների անցկացման կարգի> վերաբերյալ թիվ 2 հավելվածի 1.6. կետի պահանջները: Կարեն Հայրապետյանը գործում առկա որևէ փաստաթղթի տակ չի ստորագրել: Նշված հանգամանքը Ա/Ձ ժորա Մարտիրոսյանի կողմից դիտվում է որպես բոլորտ և անհամաձայնություն արձանագրություններում շարադրվածի վերաբերյալ և հանգեցնում է վիճարկվող ստուգման ակտի անվավերությանը:

Ա/Ձ ժորա Մարտիրոսյանը 28.10.2011թ. հանձնաժողովին ներկայացրել է գանգատ իրեն առաջադրված տուգանքի վերաբերյալ: 31.10.2011թ. ստացվել է ՊԵԿ գանգատի վերաբերյալ Մյասնիկյանի ՀՏ ուղարկված նամակի պատճենը, որով հաստատվել է, որ 28.10.2011թ. ներկայացված գանգատը կցվել է ստուգման ակտին: Սակայն մինչ այսօր ներկայացված գանգատի վերաբերյալ որևէ պատասխան չի ստացվել:

<Ստուգումների կազմակերպման և անցկացման մասին> ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի բովանդակությունից հետևում է, որ ներկայացված բողոքում բերված փաստարկներն ընդունվել են և Մյասնիկյան ՀՏ թիվ 2106022 ԱԿՏ-ը պետք է ճանաչվի անվավեր:

Ելնելով վերոգրյալից Ա/Ձ ժորա Մարտիրոսյանը խնդրում է ՀՀ ԿԱ ՊԵԿ Մյասնիկյանի ՀՏ աշխատակիցների գործողությունները ճանաչել օրենքին հակասող և 25.10.2011թ. թիվ 2106022 ակտը ճանաչել անվավեր:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը լսելով Ա/Ձ ժորա Մարտիրոսյանի ներկայացուցչի և ստուգումն իրականացրած անձանց ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերը և ապացույցները եկավ եզրակացության, որ գանգատը հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ:

Հսկիչ գնման գործընթացին մասնակցած և ստուգման ակտը կազմած պաշտոնատար անձինք նշեցին, որ հարկային տեսուչ Արգինե Հայրապետյանի կողմից 13.10.2011թ. ժամը 15:57-ին ք.Երևան, Աբովյան-Իսահակյան գետնանցում հասցեում գտնվող խանութից կատարվել է հսկիչ գնում 16000 դրամի չափով՝ մեկ զուգ ակնջող 16000 դրամ արժեքով, որի դիմաց վճարումը կատարվել է կանխիկ դրամով: Ա/Ձ ժորա Մարտիրոսյանը գումարը չի մուտքագրել ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չի տրամադրել: Ա/Ձ ժորա Մարտիրոսյանին ներկայացվեցվել են ծառայողական վկայականները և ուսումնասիրության հանձնարարագիրը՝ ծանոթացման: Որից հետո, իրականացված համապատասխան գործողություններով ուսումնասիրությունն իրականացրած պաշտոնատար անձինք հիմնավորել են Ա/Ձ ժորա Մարտիրոսյանի կողմից ՀԴՄ կտրոն չտրամադրելու փաստը: Մասնավորապես, ժամը 16:02-ին ՀԴՄ-ից դուրս է բերվել ՀՀ հաշվետվություն՝ 8000 դրամ ընդհանուր գումարով, որի մեջ կատարված վճարման արժեքը ներառված չի եղել: ՀՀ հաշվետվությունը դուրս բերելուց հետո կատարված վճարման արժեքը ժամը 16:06-ին մուտքագրվել է ՀԴՄ, դուրս է բերվել կտրոն և ժամը 16:07-ին՝ ՀՀ հաշվետվությունը 16000 դրամ ընդհանուր գումարով: Գնված ապրանքը ուսումնասիրությունն իրականացրած պաշտոնատար անձինք փորձել են ետ վերադարձնել Ա/Ձ ժորա Մարտիրոսյանին, սակայն վերջինս հրաժարվել է ետ ընդունել ապրանքը և վերադարձնել հսկիչ գնման գումարը: Այդ մասին ուսումնասիրությունն իրականացրած պաշտոնատար անձինք կազմել են համապատասխան արձանագրություն:

Հանձնաժողովին ներկայացվեց հսկիչ գնման ընթացքում գնված ակնջողերը, որոնք տեղադրված էին թղթե տոպրակում: Ընդ որում հարկ է նշել, որ նշված թղթե տոպրակի վրա նշված է Ա/Ձ ժորա Մարտիրոսյանի գործունեության հասցեն, ինչպես նաև իր կողմից շահագործվող առևտրակետի անվանումը՝ <Silver shin>:

Ելնելով վերոգրյալից Հանձնաժողովը գտնում է, որ քննարկվող դեպքում Ա/Ձ ժորա Մարտիրոսյանի կողմից խախտվել են ՀՀ Կառավարության 26.08.2004թ. թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված <Հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների> 19-րդ կետի պահանջները: Արդյունքում ստուգման ակտով կիրառվել է <Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին> ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետի 2-րդ մասով նախատեսված տուգանքը՝ գումարով 150 000 դրամ:

Ինչ վերաբերում է Ա/Ձ ժորա Մարտիրոսյանի ներկայացուցչի պնդմանը, որ ավագ հարկային տեսուչ Կարեն Հայրապետյանը չի ստորագրել 13.10.2011թ. և 18.10.2011թ. տնտեսվարող սուբյեկտի ղեկավարի կողմից ստուգման հանձնարարագիրը ստանալուց հրաժարվելու մասին արձանագրությունը, թիվ 2106022 ակտի նախագիծը և ստուգման ակտը, ապա նշվեց հետևյալը:

Ավագ հարկային տեսուչ Կարեն Հայրապետյանը չի ստորագրել հիշատակված փաստաթղթերը, քանի որ գտնվել է արձակուրդում և փաստացի չի մասնակցել թե ուսումնասիրությանը, թե ստուգմանը: Մասնավորապես, համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ Մյասնիկյանի ՀՏ պետի 05.10.2011թ. թիվ 267 հրամանի,

կանխատեսումների և ընթացիկ հսկողության բաժնի ավագ հարկային տեսուչ Կարեն Հայրապետյանին 2011թ-ի հոկտեմբերի 6-ից տրամադրվել է չվճարվող արձակուրդ 9 աշխատանքային օր:

Գանգատում նշված այն պնդման վերաբերյալ, որ Ա/Ձ Ժորա Մարտիրոսյանը 28.10.2011թ. հանձնաժողովին ներկայացրել է գանգատ իրեն առաջադրված տուգանքի վերաբերյալ, սակայն ներկայացված գանգատի վերաբերյալ որևէ պատասխան չի ստացվել, նշվեց հետևյալը:

Ա/Ձ Ժորա Մարտիրոսյանի 28.10.2011թ. գրությունը դիտվել է դրպես 18.10.2011թ-ին կազմված ստուգման ակտի նախագծի վերաբերյալ առարկություններ և ղեկավարվելով <Ստուգումների կազմակերպման և անցկացման մասին> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի դրույթներով ՀՀ ԿԱ ՊԵԿ 31.10.2011թ-ի թիվ 11-1/80600-11 գրությամբ այն ուղարկվել է Մյասնիկյանի <Տ' ստուգման ակտին կցելու համար: Ընդ որում, ՀՀ ԿԱ ՊԵԿ 31.10.2011թ-ի թիվ 11-1/80600-11 գրության պատճենը ուղարկվել է Ա/Ձ Ժորա Մարտիրոսյանին:

Հարկ է նշել նաև, որ Ա/Ձ Ժորա Մարտիրոսյանի 28.10.2011թ. գրությունը չի կարող դիտվել դրպես ՀՀ ԿԱ ՊԵԿ Մյասնիկյանի ՀՏ 25.10.2011թ-ին կազմված թիվ 2106022 ստուգման ակտի դեմ բերված գանգատ, քանի որ վերջինիս անվավեր ճանաչելու պահանջ 28.10.2011թ. գրությամբ բերված չէ:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 10-ի <Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին> N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, Հանձնաժողովի որոշման նախագիծը ուղարկվել է վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման խորհուրդ: Որոշման նախագծի վերաբերյալ Գանգատարկման խորհուրդը տվել է հետևյալ եզրակացությունը.

Ա/Ձ Ժորա Մարտիրոսյանի կողմից ՀՀ ԿԱ ՊԵԿ Մյասնիկյանի ՀՏ 25.10.2011թ. թիվ 2106022 ստուգման ակտի վերաբերյալ ներկայացված դիմում-գանգատը համարել ոչ հիմնավոր և համաձայնություն տալ դրա վերաբերյալ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի կողմից գանգատարկման խորհուրդ ներկայացված որոշման նախագծին:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Ստուգման ակտը թողնել անփոփոխ:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի նախագահ



S.ԲԱՐՍԵՂՅԱՆ